28
ՄԱՐՏԻ
2023

Luys Լույս®

ԱՄՆ-ՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՄՆ-ՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ. ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի անկախությունից ի վեր հայկական համայնքն ԱՄՆ-ում մեծ ջանքեր է գործադրել նորանկախ մայր հայրենիքին աջակցելու հարցում: Առավելապես ԱՄՆ հայ համայնքի և լոբբիստների ջանքերի շնորհիվ է անկախության առաջին իսկ տարուց, նույնիսկ դրանից էլ առաջ ԱՄՆ կառավարության կողմից հսկայական օգնություն տրամադրվել Հայաստանին՝ դարձնելով այն մեկ շնչին ընկնող օգնության հաշվով առաջատար երկրներից նախկին ԽՍՀՄ երկրների շարքում: Հայաստանին աջակցության ապահովմանն ուղղված աշխատանքները ԱՄՆ-ում հայկական համայնքի կողմից շարունակվում են առ այսօր: Այդուհանդերձ, ԱՄՆ-ի հայկական լոբբիստական կազմակերպությունների և հայկական համայնքի ծավալած գործունեությունը միշտ չէ, որ ամբողջապես համընկնում է ՀՀ իշխանությունների առաջնահերթությունների և շահերի հետ: Որոշ դեպքերում անգամ երկու կողմերի շահերն ու առաջնահերթությունները ուղղակիորեն միմյանց հակասում են:

ԱՄՆ-ՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈԲԲԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամբողջապես ընդունելի և հասկանալի իրողություն է այն, որ ամենատարբեր (ներքին և արտաքին) հարցերի շուրջ կարող են տարաձայնություններ լինել ոչ միայն Հայաստանի և սփյուռքի միջև, այլև հենց սփյուռքում գործող տարբեր կառույցների և համայնքի տարբեր թևերի միջև: Նման տարաձայնությունների հիմքերը կարող են տարբեր լինել, այդ թվում՝ հիմնված պատմական որոշ իրողությունների վրա: Հարկ է

նշել, որ Միացյալ Նահանգների հայկական համայնքը բազմաշերտ է և բազմազան: ԱՄՆ տարբեր նահանգներում են հանգրվանել և նոր կյանք կառուցել ինչպես Հայաստանից արտագաղթած մեր հայրենակիցները, այնպես էլ Ադրբեջանից, Վրաստանից և նախկին ԽՍՀՄ այլ հանրապետություններից արտագաղթած մեր հայրենակիցները: ԱՄՆ-ում են բնակվում Հայոց ցեղասպանությունը վերապրածների սերունդները, իրանահայ, սիրիահայ, լիբանանահայ համայնքի ներկայացուցիչներն ու այլ պետություններում բնակված մեր հայրենակիցները: Հետևապես, նրանց պատկերացումները իրենց պատմական հայրենիքի ներկայի և ապագայի վերաբերյալ կարող են էականորեն տարբեր լինել:

Իհարկե, ի սկզբանե հայ համայնքը համախմբվել է հայկական եկեղեցու, հասարակական կազմակերպությունների կամ ԱՄՆ-ում գործող ավանդական կուսակցությունների շուրջ: ԱՄՆ հայկական համայնքի շրջանում գործում էին չորս հիմնական կուսակցություններ: Առաջինը՝ Հնչակյան կուսակցությունը, ձևավորվել է 1887թ.՝ Ժնևում: Երկրորդ շարժումը՝ Հայ Հեղափոխական Դաշնակցությունը՝ հիմնվել է 1890-ին՝ Թիֆլիսում: Երրորդ շարժումը՝ Ռամկավար Ազատական կուսակցությունը, ձևավորվել է Եգիպտոսում՝ 1921-ին: Եվ վերջապես, չորրորդ կուսակցությունը, Հայ Առաջադեմ Լիգան, որը ձևավորվել էր ԱՄՆ-ում, ուներ կոմունիստամետ գաղափարախոսություն և պնդում էր, որ սովետական իշխանությունը Հայաստանում առավել նպատակահարմար է, և այդպիսի Հայաստանն առավել անվտանգ կարող է գոյատևել, քան Հայ Հեղափոխական Դաշնակցության կողմից կառավարվող անկախ Հայաստանը:[1]

Հետագայում այս կուսակցությունների և դրանց գաղափարախոսական հենքի վրա էլ ձևավորվել և այժմ էլ ակտիվ գործում են ԱՄՆ-ի հայ լոբբիստական կառույցները: Ներկայումս Միացյալ Նահանգներում իրենց քաղաքական կշռով և ազդեցությամբ առանձնացող հայկական էթնիկ խոշոր լոբբիստական կազմակերպությունները երկուսն են՝ Հայ դատի հանձնախումբը (ANCA, այսուհետ՝ Հայ դատ) և Ամերիկայի հայկական համագումարը (AAA, այսուհետ՝ Համագումար): Այս երկու կազմակերպությունները կարողացել են հասնել հայ համայնքի «հիպերմոբիլիզացիայի» այն աստիճանի, որին մեկ կազմակերպությունը չէր կարող հասնել՝ դրանով իսկ կրկնապատկելով հայկական հարցերի շուրջ իրենց նախագծերի տարածման սահմանները և ռեսուրսները: Օրինակ, հենց այս երկու կազմակերպությունների ջանքերով է 1995թ. ԱՄՆ Կոնգրեսում ստեղծվել Հայկական

[1] Heather S. Gregg, Working paper #13, Divided They Conquer: The Success of Armenian Ethnic Lobbies in the United States, August 2002, p.2, 10, 13, 18.

հարցերի հանձնախումբը, որի շնորհիվ հայկական համայնքի պահանջները լեգիտիմություն և ուժ են ձեռք բերում ԱՄՆ Կոնգրեսում: Այնուամենայնիվ, կազմակերպությունների պատմությունները, կառուցվածքը, մոբիլիզացման մոտեցումները և դաշինքները տարբերվում են միմյանցից:[2]

Երկու կազմակերպություններն ունեն տարբեր ստեղծման պատմություններ: Հայ դատի հանձնախմբի ստեղծման հիմքերը գալիս են Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեից, որը լոբբինգ էր իրականացնում ՀՅԴ-ի կողմից ղեկավարվող Հայաստանի առաջին Հանրապետության անունից դեռ 1918թ.: Մինչև 1972թ. Միացյալ Նահանգներում Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն՝ ներկայիս Հայ դատի հանձնախումբը, Հայաստանի անունից լոբբիստական գործունեություն ծավալող միակ կազմակերպությունն էր:

1972թ. երկու նշանավոր ամերիկահայ գործարարների՝ Սթիվեն Մուգարի և Հրայր Հովնանյանի ջանքերով իր գործունեությունը սկսեց ծավալել ԱՄՆ-ի երկրորդ խոշորագույն լոբբիստական կազմակերպությունը՝ Ամերիկայի հայկական համագումարը: Երկու բարերարների միլիոն դոլար արժողությամբ նվիրատվություններին հետևեցին բազմաթիվ ներդրումներ այլ ամերիկահայերից:[3]

Հայ դատն ու Համագումարը տարբերվում են նաև իրենց կազմակերպահիրավական ձևով: Մասնավորապես, Համագումարը գործում է 501(c)(3) կարգավիճակով, և տեսականորեն այս դեպքում լոբբինգը չի թույլատրվում դարձնել հիմնական գործունեություն: Մյուս կողմից, Հայ դատը գործում է 501(c)(4) կարգավիճակով: Սա նշանակում է, որ այն շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը կարող է լայնածավալ լոբբիստական գործունեություն իրականացնել: Հայ դատի կարգավիճակը նաև թույլ է տալիս լոբբինգ իրականացնել կոնգրեսականների շրջանում, ինչը և իրականացվում է: Ավելին, երկու տարին մեկ Հայ դատը գնահատականներ է տալիս բոլոր կոնգրեսականներին՝ սկսած F-ից մինչև A+՝ կախված ամերիկահայերի համար կարևոր հարցերի վերաբերյալ նրանց դիրքորոշումից:[4]

Պայմանավորված նաև այս հանգամանքով՝ երկու լոբբիստական խմբերի մոբիլիզացման մոտեցումները նույնպես տարբերվում են: Հայ դատի հանձնախումբը

---

[2] Նույն տեղում:

[3] Philanthropist and Homebuilder Hirair Hovnanian Passes Away, https://mirrorspectator.com/2021/04/09/philanthropist-and-homebuilder-hirair-hovnanian-passes-away/, (01.03.2023).

[4] Zarifian, J. The Armenian-American Lobby and Its Impact on U.S. Foreign Policy. Soc 51, 503–512 (2014).

գործում է «ներքևից վերև» («bottom-up») սկզբունքով: Այն ներկայանում է որպես «ամերիկյան ամենախոշոր և ԱՄՆ-ում հայկական համայնքի ներուժը կիրառող (grassroot) ամենաազդեցիկ հայ-ամերիկյան քաղաքական կազմակերպություն»: Իսկ Համագումարը հիմնականում ներգրավում և թիրախավորում է ամերիկահայ հայտնի մասնագետներին և գործարարներին, ովքեր ֆինանսապես աջակցում են լոբբիստական խմբին:[5]

Կարգավիճակների տարբերություններից զատ ԱՄՆ-ի հայկական այս երկու խոշոր լոբբիստական կազմակերպությունները նաև տարբերվում են իրենց նպատակներով, մասնավորապես՝ Հայ դատի հանձնախումբն իր գերնպատակը համարում է «միասնական, ազատ և անկախ Հայաստան»-ի կայացումը: Ընդգծվում է նաև «Հայկական հարցի արդար լուծման» կարևորությունը՝ քաղաքական և իրավական իր բոլոր հետևանքներով: Հայ դատը առանձնացնում է նաև իր առաջնահերթությունները, որոնք են՝ պաշտպանել Հայաստանի և Արցախի անկախ հանրապետությունները, ընդլայնել ԱՄՆ-Հայաստան/ԱՄՆ-Արցախ գործակցությունը, ապահովել Հայոց ցեղասպանության ճանաչումն ու արդարացի լուծումը, առաջ մղել արտաքին օգնության կառուցողական քաղաքականություն, հակազդել Հայաստանի անվտանգության սպառնալիքներին և Արցախի ինքնիշխանությանը սպառնացող վտանգներին, ինչպես նաև ապահովել վտանգի տակ գտնվող հայկական համայնքների բարօրությունն ամբողջ աշխարհում:[6]

Այս ամենին զուգահեռ, Համագումարի նպատակներն ավելի շատ միտված են գործել ԱՄՆ արտաքին քաղաքականության շահերին և արժեքներին համահունչ՝ չառաջացնելով հակասություններ: Համագումարի նպատակների թվում են՝ նպաստել հայկական հարցերի մասին հանրային իրազեկմանը, խրախուսել ԱՄՆ-ի հայ համայնքի առավել մեծ մասնակցությունը ամերիկյան ժողովրդավարական գործընթացներին և աջակցել Հայաստանում և Արցախում մարդասիրական և զարգացման ծրագրերին՝ միաժամանակ ամրապնդելով ԱՄՆ-Հայաստան և ԱՄՆ-Արցախ հարաբերությունները:[7]

[5] Heather S. Gregg, նշվ. աշխ.:

[6] ANCA Policy, Priorities & Results, https://anca.org/issue/, (02.03.2023).

[7] Armenian Assembly of America, https://www.armenian-assembly.org/about-us, (02.03.2023).

Չնայած այս բոլոր տարբերություններին, հայ լոբբիստական կազմակերպությունները համակարծիք են մի քանի առաջնահերթ ուղղությունների առումով[8], մասնավորապես.

1. **Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում և դատապարտում**: Սա թերևս տարիների ընթացքում եղել է հայկական համայնքի համար մեկ առաջնահերթությունը և ինչպես նահանգային, այնպես էլ դաշնային մակարդակով Հայոց ցեղասպանությունը ճանաչող ակտերի ընդունման ուղղությամբ զգալի աշխատանք է իրականացվել: Տարիների աշխատանքն ի վերջո տվեց իր արդյունքը, և Հայոց ցեղասպանությունը ճանաչվեց ԱՄՆ Կոնգրեսի, նախագահի և բոլոր նահանգների կողմից՝ համապատասխանաբար 2019, 2021 և 2022թթ.:

2. **Արցախի հիմնահարցը** հայկական համայնքի հաջորդ կարևոր առաջնահերթությունն է: Հայոց ցեղասպանության ճանաչումից հետո այս ուղղությամբ առավել մեծ ջանքեր ուղղելու հնարավորություն ստեղծվեց: Այս առումով հիմնական ուղղություններն են՝ Արցախի անկախության միջազգային ճանաչում, ականազերծման աշխատանքների, սոցիալական ծրագրերի իրականացում, Ադրբեջանին տրամադրվող ռազմական օգնության զրոյականացում:

3. **Հայաստանին և Արցախին ԱՄՆ-ի կողմից տրամադրվող օգնությունը** հայ համայնքի հաջորդ կարևորագույն առաջնահերթությունն է, որը ենթադրում է ոչ միայն ամենամյա բյուջեով ՀՀ-ին և ԼՂՀ-ին հատկացվող, այլև տարատեսակ խնդիրների իրականացման համար տրամադրվող գումարների մեծացում: Այս ուղղությունը մշտապես առաջնային է եղել հայ համայնքի համար, ինչի շնորհիվ անկախությունից ի վեր Հայաստանը և Արցախը զգալի օգնություն են ստացել ԱՄՆ-ից: Ավելին, հայ համայնքի ակտիվ ջանքերի շնորհիվ է ԱՄՆ-ը դարձել ՀՀ-ից հետո Արցախին ուղղակի ֆինանսական աջակցություն տրամադրող երկրորդ երկիրը:

4. Վերջին կարևոր ուղղությունն է՝ ընդհանուր առմամբ **հայ-ամերիկյան հարաբերությունների զարգացումը** տարբեր հստակ առաջարկների միջոցով, որոնց թվում են՝ ՀՀ-ի և ԱՄՆ-ի միջև կրկնակի հարկման վերացման պայմանագրի կնքումը, Երևան-Լոս Անջելես ուղղակի չվերթերի իրականացումը, տարատեսակ կրթական և այլ ծրագրերի իրականացումը և այլն:

---

[8] **Հովյան Վ.,** ԱՄՆ Հայ համայնքի քաղաքական ներուժը. դասակարգման փորձ, «21-րդ դար», թիվ 6 (76), 2017, էջ 118-130:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՄՆ-Ի ՀԱՅ ԼՈԲԲԻՍՏՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՄՆ-ի հայ համայնքի և ընդհանրապես սփյուռքի մասին խոսելիս հարկ է նշել մի փաստ, որ հայկական լոբբիի շահերն ու նպատակները միշտ չեն ուղղակիորեն համընկնում Հայաստանի Հանրապետության իշխանության դիրքորոշման հետ: Հայաստանի և սփյուռքի միջև չկա հաստատված մեկ միասնական օրակարգ, և յուրաքանչյուր կողմն առաջնորդվում է սեփական օրակարգով: Սա ունի իր պատճառները, որոնցից մեկը պատմական է:

Նախ, չնայած Հայաստանի հետ կապի պահպանումը կենսական նշանակություն ունի հայկական սփյուռքի համար՝ ազգային ինքնությունը պահպանելու տեսանկյունից, այս կապի պահպանումը միշտ չէ, որ հեշտ է եղել: Մասնավորապես, խորհրդային տարիներին սփյուռքի հայերն ու Խորհրդային Հայաստանում ապրող հայերը միմյանցից մեկուսացած էին, քանզի նրանց միջև բոլոր տեսակի շփումները վերահսկվում էին սովետական իշխանությունների կողմից: Ըստ որոշ դիտարկումների. «…Սփյուռքահայերը մնացին մենակ, թեև ստիպված էին դիմակայել իրենց հասարակություններում ինտեգրվելու ճնշմանը… Սառը պատերազմի տարիներին հայ ժողովրդի երկու հատվածների առանձին գոյությունը էլ ավելի մեծացրեց և խորացրեց արևմտյան և արևելյան հայերի միջև պատմական տարբերությունները…»: Անկախացումից հետո Հայաստանը տնտեսապես և քաղաքականապես թույլ էր և սփյուռքի աջակցության կարիքն ուներ: Հենց սփյուռքի ջանքերով Հայաստանին տրամադրվեց զգալի օգնություն ԱՄՆ կողմից, սակայն կար ընկալում, որ սփյուռքն առաջնորդվում է սեփական առաջնահերթություններով, այլ ոչ Հայաստանի: Կային հարցեր, որոնց պարագայում Հայաստանից և սփյուռքից եկող դիրքորոշումները որոշակիորեն տարբերվում էին:[9]

Այս առումով հարկ է նշել ԱՄՆ-ի Հայկական լոբբիստական կառույցների մեկ կարևոր առանձնահատկություն. վերջիններիս գործունեությունը չի ֆինանսավորվում Հայաստանի կառավարության կողմից՝ ի տարբերություն ադրբեջանական կամ թուրքական լոբբիստական կազմակերպությունների, որոնք ունեն կայուն դրամական ներհոսք պետությունից և օգտվում են նաև պրոֆեսիոնալ PR ընկերություններից: ԱՄՆ-ի հայկական լոբբին էթնիկ լոբբի է, որը ֆինանսավորվում և աջակցվում է էթնիկ

[9] Baser B., Swain A., Diaspora Design versus Homeland Realities: Case Study of Armenian Diaspora, Caucasian Review of International Affairs Vol. 3 (1), winter 2009, pp. 45-62.

հայերի կողմից: Այսպիսով, տրամաբանական է, որ դրանց առաջնահերթությունները ձևավորվում են հայ համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող հարցերի շրջանակներում:[10]

Շատ հաճախ լինում են դեպքեր, երբ սփյուռքը հայտնում է իր անհամաձայնությունը՝ Հայաստանի կառավարության վարած ներքին և արտաքին քաղաքականության հետ կապված: Մասնավորապես, խոսքը վերաբերում է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացին, սահմանների բացմանը և Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հեռանկարին: Անխոս, հայկական սփյուռքի համար սրանք զգայուն թեմաներ են և բնականաբար պայմանավորված են այն հանգամանքով, որ Օսմանյան կայսրության՝ հայերի ցեղասպանության և տեղահանության քաղաքականությունը հայկական սփյուռքի առաջացման հիմնական պատճառն է եղել, իսկ ցեղասպանության թեման հատկապես զգայուն և ցավոտ է համայնքի համար: Ուստի և տասնամյակներ շարունակ Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչումը ԱՄՆ կառավարության և ամբողջ աշխարհի կողմից եղել է հայկական լոբբիստական կազմակերպությունների ամենակարևոր առաջնահերթությունը:[11]

Հայաստանի կառավարության և սփյուռքի առաջնահերթությունների ու շահերի այս տարբերությունները նկատելի դարձան ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի վարչակազմի տարիներին, երբ սփյուռքը աշխատում էր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ, իսկ Հայաստանի իշխանությունները հայտարարում էին, որ Հայոց ցեղասպանության ճանաչումը չպետք է լինի Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթություն՝ փորձելով կարգավորել հայ-թուրքական հարաբերությունները: Տեր-Պետրոսյանի վարչակազմը հայտարարում էր հարաբերությունների կարգավորման պատրաստակամության մասին, ինչն ըստ վարչակազմի՝ համապատասխանում էր Հայաստանի պետական և անվտանգային շահերին: Մոտեցումների այսպիսի տարբերությամբ պայմանավորված, ինչպես նաև այլ քաղաքական հարցերի նկատմամբ տարակարծության պատճառներով, մասնավորապես՝ Հայաստանի ներքաղաքական զարգացումներով պայմանավորված և Դաշնակցության գործունեության կասեցման հետևանքով Հայաստան-սփյուռք հարաբերություններում զգալի լարվածություն էր ձևավորվել: Այդ լարվածությունը որոշակիորեն նվազեց երկրորդ նախագահ Ռոբերտ

[10] Gevorgyan N., The Influence of Ethnic Interest Groups on U.S. Foreign Policy: The Case of Armenian Diaspora, “Banber”,2022, sp1, pp. 98-108.
[11] Նույն տեղում:

Քոչարյանի վարչակազմի օրոք: Ի տարբերություն առաջին նախագահի՝ Ռոբերտ Քոչարյանը ձգտում էր հավասարակշռել սփյուռքի ներդրումները Հայաստանի տնտեսության մեջ՝ սփյուռքի «գաղափարական մուտքով» Հայաստան: Այդուհանդերձ, սփյուռքը Հայաստանի կառավարության՝ Հայոց ցեղասպանության ճանաչման քաղաքականությունը թույլ էր համարում: Հարցը, որի շուրջ թե՛ սփյուռքը և թե՛ ՀՀ կառավարությունը համակարծիք էին, երկքաղաքացիության հարցն էր: Սահմանադրությունը հայկական ծագումով յուրաքանչյուր անձի համար նախատեսում էր Հայաստանի քաղաքացիություն ունենալու հնարավորություն: Հայրենիք-սփյուռք հարաբերությունները Քոչարյանի կառավարման տարիներին ստացան «անվտանգության կարգավիճակ», սակայն ՀՀ կառավարության և սփյուռքի միջև կապերը հեռու էին կայուն լինելուց, երբ Սարգսյանը եկավ իշխանության: Նոր նախագահը խոստացավ ամրապնդել կապերը սփյուռքի հետ և վերականգնել հավասարակշռությունը պետության և արտերկրում ապրող հայերի հարաբերություններում: Այնուամենայնիվ, ՀՀ կառավարության՝ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման քաղաքականությունը խաթարեց այդ ծրագրերը: Թուրքիայի հետ նոր բանակցություններն ի վերջո հանգեցրին հայ-թուրքական արձանագրությունների նախաստորագրմանը, որոնք ընդունելի չէին սփյուռքի համար, քանի որ դա կարող էր վտանգի ենթարկել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման արշավը, ինչպես նաև Արցախի կարգավիճակի հետ կապված աշխատանքները: Սփյուռքը արձագանքեց այդ քայլին՝ մեկնարկելով «Դադարեցրեք արձանագրությունները» արշավը Երևանում և արտերկրում: Արդյունքում Սարգսյանը քայլեր ձեռնարկեց նրանց վախերը մեղմելու և սփյուռքի համայնքների և կառավարության միջև ավելի ամուր հարաբերություններ կառուցելու համար: 2008թ. գարնանը նա նախաձեռնեց բարեփոխումներ՝ համակարգելու Հայաստան-սփյուռք հարաբերությունների արդյունավետ պետական քաղաքականությունը: Բարեփոխումների շարքում սփյուռքի նախարարություն ստեղծելու ծրագիրն էր, որը կառավարության կազմում սկսեց գործել 2008թ. հոկտեմբերի 1-ից:[12]

Սփյուռքի շրջանում Թուրքիայի հետ ստորագրվելիք արձանագրություններին աջակցությունը մեծացնելու համար Սարգսյանը նախքան ստորագրումը նաև մեծ շրջայց իրականացրեց հայկական սփյուռքի խոշորագույն համայնքներում: 2009թ.

[12] Gasparyan A., "Disrupting" or "Complementing": Diaspora's Identity Agenda in The Context of Changing Armenian Foreign Policy Priorities,Values and Identity as Sources of Foreign Policy in Armenia and Georgia, Krakow, 2016, pp. 264-281.

հոկտեմբերին Սարգսյանն այցելեց Փարիզ, Նյու Յորք, Լոս Անջելես, Բեյրութ և Ռոստով: Համայնքներում Սարգսյանին ողջունեցին մեծ բողոքի ակցիաներով, և իր շրջայցի արդյունքում նախագահին չհաջողվեց մեծացնել աջակցությունը հայ-թուրքական արձանագրությունների նկատմամբ: Միաժամանակ հարկ է նշել, որ սփյուռքի հայ համայնքներն առավել մեծ ընդդիմություն և դժգոհություն ցուցաբերեցին արձանագրությունների նկատմամբ, քան Հայաստանում ապրող հայերը:[13]

ԱՄՆ-ի լոբբիստական կառույցների առաջնահերթությունների թվում կարևոր է նաև Արցախի հիմնախնդիրը: Դա բացատրվում է հետևյալով. «Այս հարցը համայնքի համար կարևոր է 1915-1923 թվականներին Արևելյան Անատոլիայում թուրք ազգայնականների պատճառով հողեր և կյանքեր կորցնելու իրենց պատմական հիշողության լույսի ներքո, և համայնքի համար կարևորվում է այլևս որևէ հայկական հողի կորուստ չտալը»:[14] Այնուամենայնիվ, այս հարցը Հայոց ցեղասպանության ճանաչման առաջնահերթության արդյունքում հաճախ մղվում էր երկրորդ պլան: Հետևապես, միայն ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումից հետո է Արցախի հիմնախնդիրը հայ լոբբիստների թիվ մեկ առաջնահերթությունը դարձել: Դա այն պարագայում, երբ ներկայումս Արցախի միջազգային ճանաչման կամ ազգերի ինքնորոշման իրավունքի իրացման հարցերը ներառված չեն ՀՀ իշխանությունների առաջնահերթությունների թվում կամ նույնիսկ օրակարգում:

Ինչ վերաբերում է Հայաստան-սփյուռք հարաբերություններին Փաշինյանի վարչակազմի օրոք, ապա պետք է նշել, որ իշխանափոխությունից հետո մի կարճ ժամանակ այդ հարաբերություններում դրական ազդակներ կային: Սփյուռքում որոշակի ոգևորություն կար 2018թ. տեղի ունեցած իշխանափոխությունից հետո Հայաստանում դրական փոփոխություններ տեսնելու ակնկալիքով: Այնուամենայնիվ, բնական է, որ սփյուռքի ակնկալիքները չարդարացվեցին՝ պայմանավորված ներկայիս վարչակազմի կողմից իրականացված որոշակի քայլերով: Մասնավորապես, պատերազմում պարտվելուց հետո, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի պատրաստակամությունը հարաբերություններ կարգավորել Թուրքիայի և Ադրբեջանի հետ մեծ վրդովմունք է առաջացրել սփյուռքում, հատկապես ԱՄՆ-ի հայկական համայնքի և լոբբիստական կառույցների շրջանում: Վերջիններս դեմ են արտահայտվում բանակցություններին, որ այժմ տարվում են Թուրքիայի և

[13] Lindenstrauss G., When the Diaspora Becomes an Obstacle: The Armenian Diaspora and the Negotiations between Turkey and Armenia, 2009-2010, Institute for National Security Studies, pp. 63-79.

[14] Baser B., Swain A., նշվ. աշխ.:

Ադրբեջանի հետ հատկապես այն շրջանում, երբ արցախահայությունը Ադրբեջանի կողմից շրջափակման մեջ է գտնվում, և Թուրքիան ու Ադրբեջանը, նոր ագրեսիայով սպառնալով, Հայաստանին նոր նախապայմաններ են թելադրում:

Սրան զուգահեռ, ԱՄՆ-ում այսօր աշխատում է Հայաստանի մի այնպիսի դեսպան, որը չի վայելում հայ համայնքի և հայ լոբբիստական կազմակերպությունների աջակցությունը, ունի տարբերվող մոտեցումներ սկզբունքային հարցերի շուրջ, ինչն էլ ընդհանուր առմամբ խաթարում է ԱՄՆ-ում հայկական շահերի արդյունավետ առաջմղումն ու ներկայացումը: Մեկ այլ նախաձեռնություն էլ, որ բարդացրեց Հայաստան-սփյուռք հարաբերությունները, Հայաստանի սփյուռքի նախարարության լուծարումն էր, որը պարզապես փոխարինվել է ՀՀ սփյուռքի գործերով հանձնակատարի գրասենյակով: Սա նշանակում է Հայաստան-սփյուռք հարաբերությունների նշաձողի իջեցում, որն անթույլատրելի է հատկապես այն պայմաններում, երբ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը մշտապես հայտարարում է, որ իրենց «թիվ մեկ թշնամին հայկական համայնքն ու լոբբին են»:

Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ Հայաստան-սփյուռք հարաբերությունների պատմության ողջ ընթացքում Հայաստանն ու սփյուռքը (այդ թվում՝ ԱՄՆ հայկական սփյուռքը՝ որպես ամենակազմակերպված, հարուստ և ակտիվ համայնք) այսօր ունեն այնպիսի սկզբունքային հակասություններ, ինչպիսիք երբևիցե չեն եղել վերջին 30 տարիների ընթացքում՝ չնայած տարբեր հարցերի շուրջ մշտապես ունեցած տարաձայնություններին և անհամաձայնություններին:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*